ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԹԱԻՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀՀ Արմավիր մարզ գյուղ Թաիրով Չարենցի փողոց շենք 2
Հեռ 098575218
E:mail tairov@schools.am
01.12.2023թ

«Ֆոտոն» ՍՊԸ-ի

տնօրեն Ն.Պետրոսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Արմավիրի մարզի «Թաիրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի միջև 25.08.2023թ կնքված ԱՄՓԹՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը» պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված, ծավալներով ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակցույցը սահմանված է սույն պայմանագրի N 1 հավելվածով, իսկ վճարման ժամանակացույցը N 2 հավելվածով:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ «Թաիրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատակցի գնման պահանջագրերի, գրությամբ, ինչպես նաև բանավոր կերպով դիմել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի աշխատակցին Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքները մատակարարելու պահանջով, սակայն համապատասխան

քայլեր չեն ձեռնարկվել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու համար:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7. կետը, ինչպես նաև 2.1.7.1. կետի բ ենթակետը «Թաիրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված հիմքերով միակողմանի հրաժարվում է ԱՄՓԹՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման պայմանագրից:

Պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով՝ կկիրառվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի N1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Այսպիսով «Ֆոտոն» ՍՊԸ –ին տրվում է 10 (տասը) օրացույցային օր տուժանքներով սահմանված որակավորման 4218 (չորս հազար երկու հարյուր տասնութ) և պայմանագրի 2812 (երկու հազար ութ հարյուր տասներկու) դրամ ապահովումների գումարները «ՀՀ Արմավիրի մարզի Թաիրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի 900328000170 հաշվեհամարին փոխանցելու համար:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն իր հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԹԱԻՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Digitally signed by PETROSYAN HAYKUHI 6614890360

Date: 2023.12.13 14:05 AMT